ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 20 ՀՈՒՆԻՍԻ 2015Թ.
№ 18 (361)
www.syuniacyerkir.am

Բուրմունքից արբեցած մի բզեզ քնել էր առէջքների մեջ եւ նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Ծամբ, հորանային ջրթափ՝ «Մարգարիտկա»

Ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիրը

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի ներկայությամբ կառավարությունում 2015թ. հունիսի 8-ին ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության, «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր», «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ», «Քոնթուր գլոբալ տերրա հոլդինգս» եւ «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերությունների միջեւ:

էջ 2

Մեղրու սահմանապահ ջոկատը 60 տարեկան է

Հոբելյան

Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության Մեղրու սահմանապահ ջոկատը հունիսի 10-ին նշեց կազմավորման 60-ամյակը: Առավոտից զորամասի տարածքում տոնական տրամադրություն էր: Նախկին ծառայակից ընկերները շնորհավորում էին միմյանց, հուշեր պատմում, լուսանկարվում: Հոբելյանին նվիրված հանդիսությանը մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Հայաստանում ռուս-հայկական միացյալ զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը, ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան, Հայաստանի Հանրապետությունում ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության ներկայացուցիչներ, սահմանապահ վետերաններ, Մեղրու սահմանապահ ջոկատի նախկին հրամանատարներ, մարզի համայնքների ղեկավարներ, հրավիրված անձինք:

Հանդիսությունը կայացավ Մեղրու սահմանապահ ջոկատի դահլիճում: Ռուսաստանի Դաշնության եւ սահմանապահ ջոկատի դրոշները ներս բերելուց հետո դահլիճի կամարների ներքո հնչեցին Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության օրհներգերը: Հոբելյանի առթիվ ներկաներին շնորհավորեց Մեղրու սահմանապահ ջոկատի պետ, գնդապետ Անդրեյ Կորչանովը: Բարեմաղթանքի իր խոսքում նա արժանին մատուցեց սահմանապահ վետերաններին, ովքեր հիմա շարքում են եւ օգնություն են ցուցաբերում ջոկատի մարտիկներին՝ ռազմահայրե-

էջ 3

Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցն ամփոփեց իր 10-ամյա գործունեությունը

«Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 2005 թվականին: Արդեն 10 տարի գործող մարզադպրոցը, սակայն, մշտական հանգրվան չունի: Վարչական շենքը տեղակայված է մեկ վայրում, ուսումնամարզական պարապմունքներն անց են կացվում տարբեր վայրերում: Թվում է, թե տեւական ժամանակ գործող դպրոցը պետք է ունենար, օրինակ, մարզական գույքի, ջեռուցման, շենքի հիմնանորոգման եւ մի շարք այլ «տարածված» խնդիրներ: Բայց չկա շենք, չկան նաեւ վերը թվարկված խնդիրները: Միայն մարզական գույքի մասով, ինչպես նշեց մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանը, գրեթե խնդիր չունեն, քանի որ պետությունը պարբերաբար նոր գույք է տրամադրում:

«Վերջերս կառավարության որոշմամբ 7 մլն դրամ արժողությամբ գույք է տրամադրվել դպրոցին՝ բռնցքամարտի ռինգ, ըմբշամարտի գորգ, ծանրածող, ըմբշամարտի խրտվիլակներ, վոլեյբոլի եւ բասկետբոլի գնդակներ», – տեղեկացրեց Մ.Աթայանը:

Տեւական ժամանակ դպրոցի վարչական մասը տեղակայված էր Քաջարանի արհեստագործական ուսումնարանի երկրորդ հարկում, բայց ներկայումս այնտեղ վերանորոգման աշխատանքներ են ընթանում, եւ հայտնի չէ, թե դրանց ավարտից հետո տեղ կտրամադրեն դպրոցին: *«Հնարավոր է՝ վերանորոգումից հետո ուսումնարանը չկարողանա մեզ տեղ հատկացնել իր խմբերի ավելացման պատճառով: Բայց եթե տեղ էլ տան, դա հարցի լուծում չէ. մինչեւ ե՞րբ պիտի այստեղ-այնտեղ հանգրվանենք»,* – իր մտահոգությունը հայտնեց տնօրենը:

Մարզադպրոցում գործում է ինը մարզաձեւ՝ բռնցքամարտ, ծանրամարտ, ըմբշամարտ, ձյուդո, վոլեյբոլ, բասկետբոլ, ձեռքի գնդակ, շախմատ, գեղարվեստական մարմնամարզություն: Ներկայումս ունեն 336 աշակերտ, տասը տարի առաջ դպրոցը բացվել է 300 աշակերտով՝ 24 գործող խմբով: Նշենք, որ այս տարիների ընթացքում բարձրացել է մարզիչների աշխատավարձը՝ 35 հազար դրամից հասնելով մինչեւ միջինը 118 հազար դրամ (սկսնակ մարզիչների աշխատավարձը), որ պակաս ոգեւորիչ հանգամանք չէ: Բյուջեն 7 մլն դրամից հասել է մինչեւ 35 մլն դրամ:

Տնօրենը պետությունից դժգոհ չէ. ժամանակին աշխատավարձ են ստանում, ապահովվում գույքով: Դպրոցն ունի 23 աշխատատեղ, չորս մասնաճյուղ՝ Ագարակում, Մեղրիում, Լեռնաձորում, Կապանում: Ագարակում գործում են ըմբշամարտի, Մեղրիում՝ ձյուդոյի, Լեռնաձորում՝ բասկետբոլի, Կապանում՝ ծանրամարտի մասնաճյուղերը: Պարապմունքներն անց են կացվում տարբեր հաստատությունների դահլիճներում, մասնավորապես Քաջարանի կոմբինատի մարզահամալիրում՝ ձեռքի գնդակի, գեղարվեստական մարմնամարզության, բռնցքամարտի պարապմունքները, Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրո-

էջ 4

Հրդեհ Մեղրիում. զոհվել է մեկ բնակիչ

Հունիսի 13-ին՝ ժամը 07:00-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 9 շենքում:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ ՏԿԱԻՆ-ը, դեպքի վայր է մեկնել հինգ մարտական հաշվարկ եւ ՄՓՎ օպերատիվ խումբը:

Պարզվել է, որ Անդրանիկի փողոցի թիվ 7 շենքում ամբողջությամբ այրվել են Ա. Ա.-ի (թիվ 8 բն., 35 քմ), Վ. Տ.-ի (թիվ 9 բն., 54 քմ), Ը. Մ.-ի (թիվ 11 բն. 35 քմ), Գ. Մ.-ի (թիվ 13 բն., 43 քմ), Հ. Հ.-ի (թիվ 16 բն., 70 քմ), Վ. Կ.-ի (թիվ 17 բն., 43 քմ) բնակարանները եւ Անդրանիկի փողոցի թիվ 9 հասեցում գտնվող Լ. Ա.-ի տունը (150ք.մ):

Հրդեհի հետեւանքով զոհվել է թիվ 17 բնակարանի բնակիչ՝ 1927թ. ծնված Վ.Կ.-ն:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 10:15, մարվել՝ 12:15-ին:

Մեղրիի քաղաքապետի կարգադրությամբ անօթեւան քաղաքացիները տեղավորվել են «Մեղրի» չգործող հյուրանոցում: ■

Կառավարությունը Մեղրի համայնքին գույք է նվիրաբերել

Պաշտոնական

ՀՀ կառավարությունը ս.թ. հունիսի 18-ի նիստում ընդունել է որոշում Մեղրի համայնքին գույք նվիրաբերելու մասին: Որոշման մեջ մասնավորապես նշվում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մ. Օհանջանյան 92/1 հասցեում գտնվող՝ 461.1 քառ.մետր ընդհանուր մակերեսով «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ինֆեկցիոն մասնաշենքը եւ դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված հողամասը (այսուհետ՝ գույք-1) հետ վերցնել եւ անհատույց, սեփականության իրավունքով նվիրաբերել Մեղրի քաղաքային համայնքին:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Մեղրու բժշկական կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող եւ չշահագործվող նախկին շենքը եւ դրա օգտագործման ու սպասարկման համար առանձնացված հողամասը (այսուհետ՝ գույք-2) անհատույց, սեփականության իրավունքով նվիրաբերել Մեղրի քաղաքային համայնքին՝ որպես բնակելի շենք վերակառուցելու եւ 2015 թվականի հունիսի 13-ին Մեղրի քաղաքային համայնքի Զորավար Անդրանիկ փողոցի թիվ 7 բնակելի շենքում բռնկված հրդեհի պատճառով տուժած ընտանիքներին ու Մեղրու քաղաքապետարանում հաշվառված եւ բնակարանի կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին սեփականության իրավունքով, անհատույց տրամադրելու պայմանով:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի եւ Մեղրի քաղաքային համայնքի ղեկավարի հետ համատեղ մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին եւ 2-րդ կետում նշված գույք-1-ի եւ գույք-2-ի զբաղեցրած, ինչպես նաեւ դրա օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողամասի սահմանների ճշտումը եւ համապատասխան փաստաթղթերի ձեւակերպումը,

2) «Մեղրու բժշկական կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի հետ համատեղ մեկամսյա ժամկետում ապահովել ընկերության գույքի կազմից սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի առանձնացման եւ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով «Մեղրու բժշկական կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման գործընթացը, գույքի առանձնացման ժամանակ հաշվարկվող ավելացված արժեքի հարկը վճարել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված կարգով:

3) սույն որոշման 3-րդ կետի 1) եւ 2) ենթակետերում նշված աշխատանքների ավարտից հետո Մեղրի քաղաքային համայնքի ղեկավարի հետ համատեղ երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին եւ 2-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման, նվիրաբերության պայմանագրի կնքման աշխատանքների կատարումը՝ դրանում նախատեսելով, որ նվիրաբերության պայմանագրի կնքման եւ գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման Մեղրի քաղաքային համայնքի միջոցների հաշվին: ■

Գորիսեցիներին, նաեւ հանրապետության գրականագետներին վերստին միավորել էր Ակսել Բակունցը

Տարեդարձ

Իմաստախոսությունն ասում է՝ «Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող միլիոնավոր ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական: Եվ դա մարդկության աստեղային ժամն է»: Հայ ժողովրդի համար այդ աստեղային պահերից մեկն էլ 1899 թվականի հունիսի 13-ն էր՝ հայ արձակի բյուրեղային վարպետներից մեկի՝ Ակսել Բակունցի ծննդյան աստեղային տեսլաժամը:

Օրերս լրացավ մեծանուն արձակագրի ծննդյան 116-ամյակը, որը Գորիսում նշվեց մեծ շուքով:

Բակունցյան առավոտը սկսվեց մեծանուն գրողի հուշարձանին ծաղկեդրման արարողությամբ:

Գրական տոնն այս տարի նշանավորվեց հիշարժան իրադարձությամբ. թանգարանի բակում, Սյունիքի մարզպետի մեկենասությամբ, տեղադրվեց գրողի կիսանդրին (քանդակագործ՝ Մ.Ղուկասյան): Մարզպետ Ս.Խաչատրյանի, փոխմարզպետ Վ.Դավթյանի, Գորիսի քաղաքապետ Վ.Ադունցի, Գորիսի հոգեւոր թեմի առաջնորդ Ահարոն քահանա Մելքումյանի եւ պաշտոնատար այլ անձանց անմիջական մասնակցությամբ էլ տեղի ունեցավ հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը:

Բակունցի լուսաճառագ հարկի տակ հավաքված մտավորական ընտրանու ներկայացուցիչները, մայրաքաղաքից ժամանած հյուրերը, որոնց թվում՝ Ե.Չարենցի անվան արվեստի եւ գրականության թանգարանի տնօրեն Կ.Վարդանյանը, գրականագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Դ.Գասպարյանը եւ ուրիշներ, իրենց ելույթներում շեշտեցին Բակունցի ստեղծագործության պատմական նշանակությունը, կարեւորեցին բոլոր այն ձեռնարկումները, որոնք միտված են նրա գրական հեղինակության ամրապնդմանը, ստեղծագործության հանրայնացմանը եւ սերունդներին Բակունցի իմաստուն ու լուսավոր մտքի ճանապարհով ուղղորդելու առաքելությանը:

էջ 4

Ստորագրվել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի փոփոխված եւ լրամշակված պայմանագիրը

էջ 1

Փաստաթուղթն ստորագրել են ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանը, «Քոնթուր գլոբալ հիդրոկասկադ» եւ «Քոնթուր գլոբալ տերրա հոլդինգս» ընկերությունների լիազորված անձ/ներկայացուցիչ, «Սի-Զի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ջոզեֆ Բրանդտը, «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գլխավոր տնօրեն Սասուն Խաչատրյանը:

Մինչ ստորագրման արարողությունը վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է «Սի-Զի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ջոզեֆ Բրանդտին: Կառավարության ղեկավարը ողջունել է «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի պայմանագրի ստորագրումը՝ որպես երկկողմ տնտեսական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ կարեւոր քայլ: Երկու երկրների տնտեսական կապերի ընդլայնման համատեքստում վարչապետը կարեւորել է նաեւ մայիսին Վաշինգտոնում «Առեւտրի եւ ներդրումների մասին շրջանակային համաձայնագրի» ստորագրումը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում ներդրումների ներգրավման, ապրանքաշրջանառության եւ առեւտրի խրախուսման համար:

Ջոզեֆ Բրանդտն աննախադեպ է համարել «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիր» ընկերության գույքի առքուվաճառքի պայմանագրի ստորագրումը եւ ընդգծել, որ իրենք շահագրգռված են մեծածավալ ներդրումներ կատարել՝ Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիրի արդիականացման եւ լիարժեք գործարկման համար:

Կողմերը փոխադարձ շնորհակալություն են հայտնել արդյունավետ աշխատանքի համար եւ երկուստեք վերահաստատել կառուցողական ու թափանցիկ գործընկերությունը շարունակելու պատրաստակամությունը: **gov.am**

Հոբելյան

Մեղրու սահմանապահ ջոկատը 60 տարեկան է

էջ 1

նասիրական դաստիարակության գործում: **«Միշտ արդիական է մնում հանգամանքը, որ պետական սահմանը պահպանում է ողջ ժողովուրդը, ինչի համար երախտագիտություն եմ հայտնում այն կառույցների ներկայացուցիչներին, ովքեր մեզ հետ են, եւ միշտ զգում ենք նրանց աջակցությունը»:**

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովի անունից մեղրեցի սահմանապահներին շնորհավորեց Հայաստանում հայ-ռուսական միացյալ զորքերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Միքայել Գրիգորյանը՝ մեղրեցի մի խումբ սահմանապահների հանձնելով «Մարշալ Բաղրամյան» մեդալ, պատվոգրեր: Բարեմաղթանքի խոսք ասաց նաեւ ՀՀ պաշտպանության նախարարության չորրորդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանը, իսկ Հայաստանի Հանրապետությունում ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության աշխատակազմի ներկայացուցիչ, գնդապետ Սերգեյ Մելչարիկը շնորհավորանքներից հետո պատվոգրեր հանձնեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանին:

Հոբելյանի առթիվ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության դեսպան Իվան Վոլինկինի շնորհավորական ուղերձը հրապարակեց դեսպանատան դեսպանորդ- խորհրդատու Անդրեյ Իվանովը՝ պատմական փաստերով ներկայացնելով Մեղրու սահմանապահ ջոկատի մարտական ուղին: **«Հայաստանի Մեղրու անցակետը կարեւորագույն նշանակություն ունի: Դրանով է իրականացվում ապրանքաշրջանառության եւ ընդհանրապես հաղորդակցության զգալի մասն Իրանի եւ Մերձավոր Արեւելքի երկրների հետ: Մեղրու աշխարհաքաղաքական դիրքը սահմանապահներից պահանջում է մեծ պատասխանատվություն եւ առավելագույն աչալրջություն**

Մեղրու սահմանապահ ջոկատի նախկին հրամանատար Անատոլի Շադրինը

իրենց առջեւ դրած խնդիրները լուծելու համար: Իր գոյության ընթացքում Մեղրու սահմանապահ ջոկատը մեկ անգամ չէ, որ արժանացել է պետական պարգեւների եւ գերատեսչական խրախուսանքների, ինչը վկայում է ջոկատի ողջ անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմի եւ նվիրվածության մասին: Ռուս եւ հայ սահմանապահներն այստեղ ծառայում են մի բազմազգ ընտանիքում: Մենք անկեղծորեն շնորհակալ ենք համագործակցության համար», - ասված է դեսպանի ուղերձում:

Շնորհավորանքի խոսք ասաց նաեւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

Հանդիսությանը մասնակցում էին Մեղրու սահմանապահ ջոկատի նախկին հրամանատարներ, ՌԴ վաստակավոր սահմանապահ Վլադիմիր Շկուրատովսկին եւ գնդապետ Անատոլի Շադրինը, ովքեր երախտագիտություն հայտնեցին ջերմ ընդունելության համար եւ նույնքան ջերմ խոսքեր հղեցին իրենց նախկին ծառայակիցներին: Վ.Շկուրատովսկին հայտնեց, որ իր սպայական գործունեությունը սկսել է Մեղրու սահմանապահ ջոկատում եւ շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր իր հետ ծառայել են եւ օգնել իրեն ղեկավարելու սահմանապահ ջոկատը: Այս համատեքստում նա երախտագիտություն հայտնեց Մեղրու տարածաշրջանի մարդկանց, առանց որոնց աջակցության, բանախոսի վկայությամբ, հնարավոր չէր լինի մարտական առաջադրանքները կատարել այնպես, ինչպես պահանջվում է: Նաեւ գնահատանքի խոսքեր հղեց վետերան սահմանապահ Սերգեյ Հովհաննիսյանին, ում շնորհիվ

> *“ Մեղրու սահմանապահ ջոկատը հունիսի 10-ին նշեց կազմավորման 60-ամյակը*

կայացել է որպես հրամանատար: **«Շնորհավորում եմ Մեղրու սահմանապահ ջոկատին նշանակալի հոբելյանի առթիվ, 60 տարին մի կողմից ոչ մեծ, բայց սահմանապահ ջոկատի համար հասուն տարիք է, եւ լիահույս եմ, որ այսուհետ եւս այն հուսալիորեն է պահպանելու Հայաստանի հարավային սահմանները»,** – նման լավատեսությամբ իր խոսքն ավարտեց նախկին հրամանատարը:

Անատոլի Շադրինն այժմ ղեկավարում է Գյումրու սահմանապահ ջոկատը, հոբելյանին եկել էր մասնակցելու գյումրեցի իր ծառայակիցների հետ՝ համարյա ողջ հրամանատարական կազմով եւ իր խոսքում երեխաներ ունենալ: Եվ քանի որ կապի ծառայությունում էր աշխատել, նաեւ իր բարեմաղթանքները հղեց կապավոր սահմանապահներին: **«12 տարի է, ինչ բնակվում եւ աշխատում ենք Մոսկվայում, բայց չի եղել մի օր, որ չհիշենք այս մեղրահամ երկրամասը, որքան էլ շքեղ ու հարմարավետ լինի Մոսկվան»,** – ելույթի ավարտին ասաց Նատալյան:

Ջոկատի անցած մարտական ուղուն պատմական անդրադարձ կատարեց սահմանապահ զորքերի ծերունազարդ վետերան Սերգեյ Հովհաննիսյանը՝ նշելով, որ հանրապետության սահմանների անձեռնմխելիության երաշխիքներից մեկը Մեղրու սահմանապահ ջոկատի սերտ համագործակցությունն է տեղի բնակչության հետ: Հովհաննիսյանները սահմանապահների գերդաստան են. ինչպես տեղեկացրեց բանախոսը, իր ընտանիքը Մեղրու պետական սահմանը պահպանում է 200 տարուց ավելի, այդ գործին են «լծվել» երկու որդին, երկու հարսները, երկու թոռնուհիները եւ միակ թոռը: Ինքը կյանքի 50 տարուց ավելին նվիրել է սահմանապահ ծառայությանը, այժմ էլ ղեկավարում է սահմանապահ ջոկատի վետերանների խումբը: Եվ սիրում է կատակել. մի բան է պատմում՝ ասելով. «Երբ ես երիտասարդ էի՝ 66 տարեկան…»:

Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատար Անդրեյ Կորչանովը, Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհանիսյանը (կենտրոնում) եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը

Միջոցառմանը ներկա էր նաեւ ՌԴ դեսպանատան դեսպանորդ-խորհրդատու Անդրեյ Իվանովը (կենտրոնում)

ընդգծեց այն միտքը, որ Մեղրու եւ Գյումրու սահմանապահ ջոկատները վաղուց եղբայրացել են, միմյանց միջեւ կադրերի փոխանակում է լինում: Նախկինում ղեկավարած զորամասին նա հեռուստացույց էր նվեր բերել՝ նաեւ ավելացնելով, որ «գյումրեցիներով» մի պար են պատրաստել՝ հանդիսավոր ճաշկերույթին ներկայացնելու համար:

Ալեքսանդր Ստալինովը հոբելյանին մասնակցելու էր եկել տիկնոջ հետ. Մոսկվայից էին ժամանել: Նախկին մեղրեցին կարոտով է հիշում այստեղ անցկացրած տարիները եւ հաջողություն մաղթեց սահմանապահներին իրենց ոչ դյուրին ծառայության ընթացքում: Կինը՝ Նատալյան հիշեց իր ծառայության տարիները, նաեւ սահմանապահ տիկնանց հորդորեց ծառայության հետ մեկտեղ կատարել կնոջը վերապահված գլխավոր առաքելությունը՝

Տոնական միջոցառմանը հանդես եկան օրիգինալ ժանրի վարպետ Արմեն Ադոնցը, երգիչ-երգչուհիներ: Հանդիսությանը տոնական երանգներ հաղորդեց սահմանապահ վարչության ռազմական նվագախումբը, որը մասնավորապես կատարեց «Մեղրու ճամփան» կոմպոզիցիան:

Խրախուսանքների, հուշավերների, դրամական պարգեւների արժանացան մի ստվար խումբ սահմանապահներ: Հանդիսությունը շարունակվեց տոնական սեղանների շուրջ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գորիսեցիներին, նաեւ հանրապետության գրականագետներին վերստին միավորել էր Ակսել Բակունցը

էջ 2

Օրվա առթիվ թանգարանը Գորիսի մշակութային ու ստեղծագործական կառույցների համատեղ ուժերով բակունցասերներին ներկայացավ միջոցառումների հարուստ ծրագրով: Այցելուներն անգնահատելի հնարավորություն ունեցան հաղորդակցվելու Բակունցի՝ «մյուռոնի նման սրբազնագույն» աշխարհին, «շփվելու» նրա սիրված հերոսների հետ, ներշնչվելու նրա հոգեւոր ներկայությամբ:

Թանգարանում առաջին անգամ բացվեց բակունցյան մոտիվներով գեղանկարների ցուցահանդես՝ Գորիսի Գ.Պարոնյանի անվան արվեստի դպրոցի եւ ՀՀ գեղագիտության ազգային ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի սաների մասնակցությամբ, ինչը վառ գույներ հաղորդեց օրվա խճանկարին:

Հյուրերը գրողի բյուրեղային ստեղծագործությունների բույրն ու հմայքը մեկ անգամ եւս վայելեցին «Միրհավ» գրական ակումբի շնորհիվ, որ հանդես եկավ Բակունցի գրական դիմանկարն ամբողջացնող գեղարվեստական կոմպոզիցիայի մատուցմամբ:

Օրվան տոնական հուզառատ լիցքեր հաղորդեց Գորիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի ժող. գործիքների համույթը, առանձին կատարումներով հանդես եկավ երգչուհի Սուսաննա Ղումաշյանը: Հանդիսականներին երաժշտական գողտրիկ համարներ մատուցեցին նաեւ Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի շնորհաշատ սաները:

> *Օրվա առթիվ թանգարանը Գորիսի մշակութային ու ստեղծագործական կառույցների համատեղ ուժերով բակունցասերներին ներկայացավ միջոցառումների հարուստ ծրագրով: Այցելուներն անգնահատելի հնարավորություն ունեցան հաղորդակցվելու Բակունցի՝ «մյուռոնի նման սրբազնագույն» աշխարհին, «շփվելու» նրա սիրված հերոսների հետ, ներշնչվելու նրա հոգեւոր ներկայությամբ:*

Օրը համեմվեց թանգարանի այգում ավանդական մատաղի հյուրասիրությամբ:

ԱՐԵՎԻԿ ԱԲԵԼՅԱՆ
ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հյուրերը գրողի բյուրեղային ստեղծագործությունների բույրն ու հմայքը մեկ անգամ եւս վայելեցին «Միրհավ» գրական ակումբի շնորհիվ, որ հանդես եկավ Բակունցի գրական դիմանկարն ամբողջացնող գեղարվեստական կոմպոզիցիայի մատուցմամբ

Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցն ամփոփեց իր 10-ամյա գործունեությունը

էջ 1

ցում՝ վոլեյբոլի, թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ բասկետբոլի, մանկական արվեստի դպրոցում՝ շախմատի պարապմունքները:

«Մեզ համար մտահոգիչ է նաեւ համապատասխան կադրերով համալրումը: Ցավալիորեն պիտի նշեմ, որ մարզաշխարհում հաջողություն գրանցած ոչ բոլոր մարզիկներն են վերադառնում Քաջարան», – նշեց Մ.Աթայանը:

Այս ողջ ժամանակահատվածում դպրոցի ձեռք բերած հաջողություններն ըստ արժանվույն չեն լուսաբանվել, թերեւս սա դպրոցի համար մեծ բացթողում պիտի համարել:

Հայաստանի ձեռքի գնդակի այս տարվա առաջնության եզրափակիչ փուլին, որ տեղի կունենա հոկտեմբերին, կմասնակցեն, իսկ նախանցյալ տարի գավաթով վերադարձան: *«Ճիշտ է, այս տարի նշանակալի հաջողություն չենք գրանցել, բայց դիտարժան խաղեր ենք ցուցադրել: Գնդակով, մարզահագուստով ապահովված ենք, բայց դարպաս չունենք: Եթե կարողանանք այդ հարցը լուծել, անպայման հաղթանակ կգրանցենք»,* – նշեց մարզիչ Անահիտ Հայրապետյանը:

Դպրոցի ծանրամարտիկները վերջերս մասնակցեցին Սամվել Հակոբյանի անվան հուշամրցաշարին, որտեղ 56 կգ քաշայինների կարգում 2-րդ տեղ գրավեց Արմեն Կարապետյանը, Արման Պետրոսյանը՝ 3-րդ տեղ: Սարդարապատի հերոսամարտին նվիրված ծանրամարտի հուշամրցաշարին գրավել են երեք առաջին տեղ, մեկ՝ երկրորդ: Մարզիչ Գարիկ Խաչատրյանի խոսքերով՝ հետաքրքրության կա ծանրամարտի հանդեպ, եւ սաներն ամենայն պատասխանատվությամբ են մասնակցում պարապմունքներին: Վալենտինա Մովսիսյանը (մարզիչ՝ Կարեն Հարությունյան) ծանրամարտի աղջիկների ու պատանիների Հայաստանի առաջնությունում գրավեց 2-րդ տեղը եւ օգոստոսին պիտի մասնակցի աղջիկների եւ պատանիների Եվրոպայի առաջնությանը: *«Ի պատիվ Սյունիքի մարզի՝ առաջին անգամ սյունեցի աղջիկ ծանրամարտիկ կմասնակցի առաջնությանը: Նախկինում Եվրոպայի պատանիների առաջնությունում զբաղեցրել ենք 7-րդ տեղը: Տա Աստված, այնքան հնարավորություններ ունենանք, որ մշտապես կարողանանք մասնակցել լուրջ առաջնությունների»,* – նշեց տնօրենը:

Գեղարվեստական մարմնամարզության խմբի սաները Ծաղկաձորում կմասնակցեն Մոսկվայի կազմակերպած միջազգային մրցումներին: Մասնակցության ծախսերի զգալի մասը հոգացել է Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանը: Ի դեպ, նշենք, որ քաղաքապետարանը հնարավորության սահմաններում մշտապես աջակցում է մարզադպրոցի սաներին: Անցյալ տարի Գյումրիում անցկացված միջազգային մրցաշարին մասնակցել է ինը երեխա, ովքեր վերադարձել են հաղթանակով, ընդ որում՝ երկու հոգի առաջին տեղ է զբաղեցրել: Ծնողները նույնպես իրենց ներդրումն ունեն, հատկապես համապատասխան հագուստի եւ գույքի ձեռքբերման հարցում:

Մերուժան Աթայան, մարզադպրոցի տնօրեն

Մարզադպրոցի սան Վահե Իվանյանը (Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանող) մասնակցել է թեթեւ աթլետիկայի տարբեր առաջնությունների՝ զբաղեցնելով մրցանակային տեղեր: Մասնավորապես 2015թ. թեթեւ աթլետիկայի ՀՀ առաջնությանը զբաղեցրել է երրորդ տեղ՝ լրացնելով մեծահասակների առաջին կարգը: Նա կմասնակցի նաեւ համահայկական խաղերին՝ ներկայացնելով Քաջարան քաղաքը: Այդ խաղերին կմասնակցի նաեւ Հրաչ Ամիրջանյանը, ով միակ մարզիկն է Հայաստանից, որ մասնակցելու է Կոլումբիայում կայանալիք աշխարհի առաջնությանը (հեռացատկ):

«Քաջարանն ըմբշամարտի հարուստ ավանդույթներ ունի եւ այսօր էլ շարունակում է դրանք պահպանել: Մարզադպրոցն Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանի աջակցությամբ Ագարակում բացել է ազատ ոճի ըմբշամարտի խումբ (մարզիչ՝ վաստակավոր մարզիչ Յուրիկ Ավետիսյան), որը գրանցել է մի շարք հաջողություններ տեղական եւ միջազգային մրցումներում: Հունահռոմեական ոճի ըմբշամարտի (խմբ.՝ մարզիչ Մ.Աթայան) սաներից Արարատ Մանուչարյանն ըմբշամարտի երիտասարդների Հայաստանի առաջնությունում զբաղեցրեց 3-րդ, պատանիների առաջնությունում՝ 2-րդ տեղը: Այս տարի կմասնակցի աշխարհի առաջնությանը», – նշեց տնօրենը: Ըմբշամարտի պարապմունքներն անց են կացվում Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցի հանդիսությունների սրահում, վերջերս ձեռք է բերվել նաեւ ըմբշամարտի գորգ:

Դպրոցի շախմատիստները հունվարին մասնակցել են Ջերմուկում անցկացված միջազգային մրցաշարին: 2014թ. մարզային մրցաշարում մինչեւ 10 տարեկան տարիքային խմբում Վահե Վարդանյանը զբաղեցրել է 2-րդ, իսկ մինչեւ 14 տարեկանների խմբում՝ Նարեկ Հարությունյանը՝ 3-րդ տեղը: 2015թ. մարզային մրցաշարում Վահե Վարդանյանը զբաղեցրել է առաջին տեղ, իսկ Գոռ Վարդանյանը՝ չորրորդ: Նշենք, որ այդ մրցաշարի մասնակիցների թիվը 100-ից անցնում է: 2011թ. Մանե Սեւաչյանը, ով գրավել էր շախմատի Հայաստանի առաջնության 3-րդ տեղը, մասնակցեց նաեւ Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններին: Տնօրենը նշեց, որ մարզիչ Արտաշես Գրիգորյանը Քաջարանում բավականին լուրջ հիմքերի վրա է դրել շախմատը:

Բռնցքամարտի մարզիչ Աշոտ Սադխյանի տեղեկացմամբ՝ մայիսի 15-17-ը կայացած բաց առաջնությանը, որ նվիրված էր Մեծ հաղթանակի 70 եւ Շուշիի ազատագրման 23-ամյակներին, Միքայել Կիրակոսյանը 26կգ քաշային կարգում գրավել է առաջին, իսկ Ռազմիկ Ղալումյանը՝ 36կգ քաշային կարգում երկրորդ տեղը: 2013թ. Սոչիում կայացած միջազգային մրցումներին, որին մասնակցում էր 60-ից ավելի երկիր, Ռուբեն Հակոբյանը գրավեց երրորդ տեղը: *«Աշակերտների հաճախելիությունից եւ հետաքրքրվածությունից դժգոհ չեմ, իհարկե, հարկ եղած դեպքում մենք նույնպես որոշակի աշխատանքներ ենք կատարում դիմորդներին ուղղորդելու գործում»,* – նշեց Ա.Սադխյանը:

Սամվել Հայրապետյանի անվան բասկետբոլի ներդպրոցական հուշամրցաշար անցկացրին, որին մասնակցելու էին եկել Ս.Հայրապետյանի ազգականները: Բասկետբոլի, վոլեյբոլի ուղղությամբ դպրոցում դեռ շատ աշխատանքներ պիտի կատարվեն:

«Ամեն ազգ ունի ավանդական մարզածեւեր, որոնցում մշտապես գրանցում է հաջողություններ: Հայը նշանակալի հաջողություններ է գրանցել հատկապես բռնցքամարտի, ծանրամարտի, ըմբշամարտի, շախմատի բնագավառներում, ուրեմն մենք պիտի այդ ուղղությամբ զարգացնենք մեր հնարավորությունները», – նշեց Մ.Աթայանը:

Գաղտնիք չէ, որ այսօր գործում են տարբեր խմբակներ, որոնք ինչոր տեղ խոչընդոտում են պետական ենթակայության մարզադպրոցի աշխատանքներին: Բայց ինչպես փորձառու մարզիչներն են նշում, այդ խմբակների մարզիչները, նախեւառաջ, պիտի ճանապարհ անցնեն, համապատասխան փորձ ձեռք բերեն, պարբերաբար վերապատրաստվեն, հետո միայն հանձն առնեն այդ լուրջ եւ պատասխանատու գործը:

Համագործակցում են նաեւ Երեւանի օլիմպիական քոլեջի հետ. այս պահին այնտեղ սովորում է մարզադպրոցի հինգ ըմբշամարտիկ:

Հանրապետությունում գործող պետական ենթակայության մարզադպրոցների շարքում Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոցը կարելի է լավագույն տասնյակում ներառել:

Տնօրենի հավաստմամբ՝ սեփական շենք ունենալու դեպքում ավելի մեծ հաջողություններ կարձանագրեն, քանի որ կկարողանան ավելի արդյունավետ համակարգել իրենց աշխատանքները: Նա շնորհակալություն հայտնեց Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանին, Ագարակի քաղաքապետ Մխիթար Զաքարյանին, «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության տնօրենությանը, ինչպես նաեւ Քաջարանի թիվ 1 եւ 2 միջնակարգ դպրոցների տնօրեններին՝ մշտապես աջակցելու համար:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համահայկական ծաղկի փառատոն Սիսիանում

Տեւական ընդմիջումից հետո հունիսի 5-ին Սիսիանի մարզադաշտում անցկացվեց Համահայկական «Ծաղկի տոն» փառատոնը:

Այն իրականություն դարձրեց Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպությունը՝ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ֆինանսավորմամբ: Առանձին տաղավարներում ներկայացված էին հաշմանդամների ձեռքերով պատրաստված կիրառական արվեստի նմուշներ, գեղանկարներ, ձեռքի աշխատանքներ, հրավիրված էին երաժշտական կոլեկտիվներ, անհատ կատարողներ: Հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրու մասնաճյուղի ղեկավար Արմինե Նիկողոսյանի փոխանցմամբ՝ իրենք ձգտել են Սիսիան բերել Գյումրվա կոլորիտը, համն ու հոտը: Գյումրեցիների տաղավարում Ֆայտոն Ալեքն էր՝ Հեղնարով, Գյումրու ծեսերը, արհեստն ու արվեստն արտացոլող պարագաները: Փառատոնին մասնակցում էին հանրապետության հինգ մարզ եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գայանե Գրիգորյանը «Սյունյաց երկրի» հետ զրույցում կարեւորեց նման միջոցառումների անցկացումը, մանավանդ երիտասարդ հաշմանդամների փոխշփման առումով: Ի դեպ, Արցախը ներկայացնող տաղավարում փառատոնի մասնակիցներին հյուրասիրում էին ժենգյալով հաց ու գինի:

Վայոց ձորը ներկայացնում էր հաշմանդամների «Սատար» հասարակական կազմակերպությունը (նախագահ՝ Աշխեն Մարգարյան): Կազմակերպության անդամներին միացել էր Վայոց ձորի աշուղական-ժողովրդական երգի համույթը (ղեկավար՝ Սամվել Գրիգորյան): **«Եկել ենք, որ մեր ազգային-ժողովրդական երգով ուրախացնենք տոնի մասնակիցներին»,** – ասում է համույթի ղեկավարը:

Բնականաբար, առավել ներկայացուցչական էր Սիսիանի պատվիրակությունը, փառատոնին մասնակցում էին Սիսիան քաղաքը եւ տարածաշրջանի համարյա բոլոր գյուղերը, փառատոնի կայացմանը մեծապես նպաստել էր Սիսիանի քաղաքապետարանը (համայնքի ղեկավար՝ Աղասի Հակոբջանյան):

Ողջերթի խոսքեր ներկաներին հղեց Սյունիքի մարզի հաշմանդամների «Խարիսխ» հասարակական կազմակերպության նախագահ Սուսաննա Իսաջանյանը. **«Երկու տարի երազել եմ, որ այս միջոցառումն իրականություն դառնա, որ ցույց տանք, թե ինչի են ընդունակ սահմանափակ կարողություններով մարդիկ, նախկինում նպատակը մեկն էր լինում. հաշմանդամին ինտեգրել հասարակությանը, այս անգամ ցանկացել ենք հակառակն անել, հասարակությանն ենք ուզում հաղորդակից դարձնել հաշմանդամի կյանքին, քանզի որքան էլ հաշմանդամն առողջ լինի, պատրաստ լինի ինտեգրվելու հասարակությանը, եթե դուռը չբացվի, դիմացինը չընդունի նրան, ոչինչ չի ստացվելու, այս անգամ չակերտավոր դուռ բացելու միջոցառում ենք անվանել»:** Ս.Իսաջանյանը ելույթի ավարտին այն միտքը հայտնեց, որ ջանացել են տոն կազմակերպել, իսկ թե որքանով է հաջողվել, այդ մասին կարող է կարծիք հայտնել հանդիսականը:

Սյունիքի մարզպետարանի անունից փառատոնի կազմակերպիչներին ու մասնակիցներին շնորհակալություն հայտնեց մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը: Փառատոնի բացման արարողությանը մասնակցում էր Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ով շրջեց տաղավարներով, ծանոթացավ դրանց ցուցադրանքին, հետաքրքրվեց հաշմանդամների առօրյայով:

Փառատոնի շրջանակում Համո Սահյանի անվան մշակույթի կենտրոնում «Տիկնիկ» հասարակական կազմակերպության (նախագահ՝ Գրիշա Մարգարյան) ուժերով բեմադրվեց «Սասունցի Դավիթ» տիկնիկային ներկայացումը, որ հավանությամբ ընդունվեց հանդիսականի կողմից: Փառատոնի ծրագիրը ներառում էր մրցանակաբաշխություն: Մրցանակներ էին սահմանվել «Ծաղկի ամենահարուստ տեսակի» անվանակարգում, որ հանձնվեց Սիսիանի Սալվարդ գյուղի ներկայացուցիչներին, որոնց պատրաստած տեսականու մեջ 73 տեսակի ծաղիկ կար: «Ծաղիկներից պատրաստված ամենագեղեցիկ կոմպոզիցիայի» համար մրցանակը բաժին ընկավ Գյումրուն, փառատոնի մասնակիցներից ամենաակտիվ համայնք ճանաչվեց Եղեգնաձոր քաղաքը, ամենահայկական համայնքը՝ Արցախը: Շարադրությունների մրցույթում հաղթող ճանաչվեց Սիսիանի N4 դպրոցի ութերորդ դասարանի աշակերտուհի Գայանե Խառատյանը: Խրախուսական մրցանակների եւ պատվոգրերի արժանացան միջոցառման մի խումբ մասնակիցներ:

Փառատոնի մասնակիցները եղան Շաքեի ջրվեժում, Սիսիանի այլ դիտարժան վայրերում: «Ծաղկի տոն» փառատոնը եզրափակվեց տոնական հրավառությամբ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հալիձորում տեղի ունենցավ «Ոչխարների խուզում» երկրորդ փառատոնը

«Տաթեւեր» ճոպանուղու «Հալիձոր» կայանի հարակից տարածքում հունիսի 6-ին անցկացվեց «Ոչխարների խուզում» փառատոնը, որի հիմնական նախաձեռնողը «Տաթեւի վերածնունդ» ծրագիրն իրականացնող «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամն է:

Արդեն երկրորդ անգամ անցկացվող փառատոնի հիմնական նպատակը Տաթեւը որպես զբոսաշրջային ուղղություն գրավիչ դարձնելն է եւ «Տաթեւի վերածնունդ» ծրագրում ընդգրկված ինը համայնքների սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացմանը նպաստելը:

Բացի ոչխարների խուզման հետաքրքրաշարժ մրցույթից ու մրցանակաբաշխությունից, փառատոնի ընթացքում կազմակերպվեցին նաեւ տարբեր միջոցառումներ՝ ազգային երգ ու պար, մարզական մրցույթներ, ազգային եւ՝ կոնկրետ տարածաշրջանին բնորոշ ուտեստների համտես, ազգային տարազներով լուսանկարահանում՝ «Մարաշլյան» ֆոտոստուդիայի կողմից:

«Տաթեւի վերածնունդ» ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնք ներկայացել էր առանձին տաղավարով՝ զբոսաշրջիկներին առաջարկելով սեփական արտադրանքը: **«Այս փառատոնի, ինչպես նաեւ տարածաշրջանում իրականացվող IDeA հիմնադրամի մյուս նախաձեռնությունների գլխավոր նպատակը տարածաշրջանի համայնքների զարգացմանը նպաստելն է՝ հիմնականում զբոսաշրջության միջոցով: Այսպիսի միջոցառումները լավ հնարավորություն են, որպեսզի զբոսաշրջիկներն այցելեն Տաթեւ, հյուրընկալվեն համայնքներում գործող B&B դասի հյուրատներում, օգտվեն տեղի բարիքներից՝ այդ կերպ նպաստելով, որպեսզի համայնքներում եւս համապատասխան առաջարկներ ձեւավորվեն: Այս ամենից բացի, փառատոնը նաեւ հետաքրքիր միջոցառումն է, որը զբոսաշրջիկներին տեղի հետաքրքիր ավանդույթներին ծանոթանալու հնարավորություն է ընձեռում»,** - ընդգծում է IDeA հիմնադրամի գլխավոր տնօրեն Արմեն Գեւորգյանը:

«Տաթեւի վերածնունդ» ծրագրի ղեկավար Հայկ Թութունջյանը նշում է, որ աշխատում են տարածաշրջանում գործող մոտ քսան B&B դասի հյուրատների հետ, աջակցություն եւ խորհրդատվություն է ցուցաբերվում, որպեսզի նրանք համապատասխան կարողություններ ստեղծեն եւ ի վիճակի լինեն պատշաճ որակի ծառայություններ մատուցել:

«Փառատոնից ակնկալվող արդյունքը համայնքային տնտեսությունների զարգացումն է: Այսինքն, զբոսաշրջիկը, այսպես ասած, պետք է գա, վայելի փառատոնը ու տարբեր ծառայություններ ստանալով՝ գումար թողնի համայնքում: Մենք ուրախ ենք, որ շատ զբոսաշրջային ընկերություններ ոչխարների խուզման փառատոնն արդեն ներառում են իրենց առաջարկներում եւ ժամանակացույցերում», – նշում է Հայկ Թութունջյանը: Ոչխարների խուզման մրցույթին նույնպես մասնակցում են «Տաթեւի վերածնունդ» ծրագրում ընդգրկված եւ տարածաշրջանի այլ համայնքների բնակիչներ: Ութ համայնքից ընտրված ինը մասնակիցները երեք փուլերով մրցեցին հաղթողի կոչմանն արժանանալու համար: Ժյուրին որոշեց հաղթողին՝ հաշվի առնելով խուզման տեւողությունն ու որակը:

Առաջին տեղն զբաղեցրեց Վերիշեն համայնքից Սեյրան Մկրտչյանը, երկրորդ եւ երրորդ տեղերը՝ համապատասխանաբար Շուռնուխ համայնքի բնակիչ Գարեգին Դալլաքյանը եւ Խոտ համայնքի բնակիչ Հրանտ Գալստյանը: Փառատոնի կազմակերպիչների կողմից հաղթողներին խրախուսական մրցանակներ շնորհվեցին:

Փառատոնը կազմակերպվում է «Տաթեւի վերածնունդ», «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամների եւ «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ -ի հետ համատեղ, գործընկերն է Գորիսում գործող Կանանց զարգացման «Ռեսուրս Կենտրոն» հիմնադրամը, հովանավորներն են «Գոլդեն Գրեյտ Արմաս» եւ Pepsi ընկերությունները:

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի հանրային կապերի բաժին

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

KPMG

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություններից և համապատասխան ծանոթագրություններից, պատրաստվել են «Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի («Ընկերություն») 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվի ավարտված տարվա առաջին անգամ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2015թ. հունիսի 9-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր տեղեկությունները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Ընկերության առաջին անգամ ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում առաջին անգամ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Ծրագրավորված ձևակերպում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

Եզրակացություն

Մեր կարծիքով, Ընկերության 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա առաջին անգամ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Տիգրան Գասպարյան
Տնօրեն

Արմեն Գեւորգյան
Աուդիտի բաժնի տնօրեն

KPMG Armenia cjsc

«ՔՊՄԳ-Փ-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
9 հունիսի 2015թ.

«Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազ. դրամ	31 դեկտեմբերի 2014թ.	31 դեկտեմբերի 2013թ.
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	25,312,068	28,618,920
Ոչ նյութական ակտիվներ	545,620	558,699
Կուտակվածի կողմից տրված փոխառություն	1,724,434	406,508
Ընթացիկ հարկային ակտիվներ	519,175	519,175
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	55,728	192,146
Ոչ ընթացիկ ակտիվներ	**28,157,025**	**30,295,448**
Պաշարներ – զուտ	2,487,713	2,361,801
Պաշարներ – պատրաստի արտադրանք	1,213,158	1,138,044
Տրված փոխառություն	6,598	8,250
Առևտրային և այլ դեբիторական պարտքեր	1,260,256	1,743,261
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	84,478	68,355
Ընթացիկ ակտիվներ	**5,052,203**	**5,319,711**
Ընդամենը ակտիվներ	**33,209,228**	**35,615,159**
Սեփական կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	1,863,500	1,863,500
Պահուստներ	6,812,502	6,812,502
Չբաշխված շահույթ	1,563,673	5,954,160
Ընդամենը սեփական կապիտալ	**10,239,675**	**14,630,162**
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	7,923,071	1,622,560
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,781,619	2,725,590
Տարների վերակազմման գծով պահուստ	1,288,925	1,154,466
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**10,993,615**	**5,502,616**
Վարկեր և փոխառություններ	1,735,335	1,071,983
Վերակազմվող երկարաժամկետ փարկային վիճ	5,336,262	4,741,628
Պայմանագրերին գնանշվող փոխարկների գծով առաջացած կանխավճարներ	822,247	5,263,585
Առևտրային և այլ կրեդիторական պարտքեր	4,082,094	4,405,185
Ընթացիկ պարտավորություններ	**11,975,938**	**15,482,381**
Ընդամենը պարտավորություններ	**22,969,553**	**20,984,997**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**33,209,228**	**35,615,159**

4

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների լրացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ միասին:

«Մկրտչի պրոմ-մոլորակների խումբ» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. դրամ	2014թ.	2013թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հանձնաժողովների ստացված դրամական միջոցներ	15,137,784	23,005,217
Աշխատանքային վճարված դրամական միջոցներ	(2,898,246)	(2,904,304)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(12,782,558)	(13,111,467)
Հարկեր բացառությամբ շահութահարկի	(1,001,611)	(1,159,775)
Այլ վճարումներ	(45,699)	(38,412)
Գործառնական գործունեության հաշվեկշիռ (օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան շահութահարկի և սոցվճարների վճարումը	**(1,590,322)**	**5,791,259**
Վճարված շահութահարկ	(187,607)	(488,416)
Վճարված տոկոսներ	(668,683)	(545,367)
Գործառնական գործունեության հաշվեկշիռ (օգտագործված)/գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(2,446,612)**	**4,757,476**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(1,780,210)	(2,268,449)
Տրված փոխառություններ	(2,912,800)	(405,620)
Տրված փոխառությունների մարում	1,902,435	-
Ստացված տոկոսներ	21,041	3,433
Ներդրումային գործունեության հաշվեկշիռ (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**(2,769,614)**	**(2,670,636)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	5,307,366	6,080,239
Վարկերի և փոխառությունների մարում	(99,786)	(8,042,878)
Ֆինանսական գործունեությունից ստացված/ֆինանսական գործունեության հաշվեկշիռ (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**5,246,580**	**(1,962,639)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**30,354**	**124,201**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	68,355	11,965
Ազդեցություն փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(14,231)	(67,811)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	**84,478**	**68,355**

7

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող հանձնաբարության հետ միասին:

«Մկրտչի պրոմ-մոլորակների խումբ» ՓԲԸ
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. դրամ	2014թ.	2013թ.
Հասույթ	19,651,200	18,621,274
Վաճառքի ինքնարժեք	(18,084,553)	(17,505,249)
Համախառն շահույթ	**1,566,647**	**1,116,025**
Այլ եկամուտ	39,024	51,537
Իրացման ծախսեր	(32,132)	(55,739)
Վարչական ծախսեր	(2,362,518)	(2,621,312)
Այլ ծախսեր	(1,084,080)	(1,119,740)
Գործառնական գործունեության արդյունքներ	**(1,873,059)**	**(2,629,229)**
Ֆինանսական եկամուտ	68,362	6,050
Ֆինանսական ծախսեր	(3,228,139)	(1,110,913)
Զուտ ֆինանսական ծախսեր	**(3,159,777)**	**(1,104,863)**
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	**(5,032,836)**	**(3,734,092)**
Շահութահարկի գծով փոփոխություններ	642,349	830,338
Վնաս և ընդհանուր համապարփակ վնաս տարվա համար	**(4,390,487)**	**(2,903,754)**

4-ից 8-րդ էջերում ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2015թ. հունիսի 9-ին և առաջարկվել են վերջնական անունից:

Տուրի Թերեզովի
Գլխավոր տնօրեն

Ռուբեն Մերգարյան
Ֆինանսական տնօրեն

5

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող հանձնաբարության հետ միասին:

«Մկրտչի պրոմ-մոլորակների խումբ» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազ. դրամ	Բաժնետոմսերի կանոնադրական կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը դեկ 1 հունվարի 2013թ.	1,863,500	6,812,502	8,857,914	17,533,916
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Վնաս տարվա համար	-	-	(2,903,754)	(2,903,754)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(2,903,754)	(2,903,754)
Մնացորդը դեկ 31 դեկտեմբերի 2013թ.	**1,863,500**	**6,812,502**	**5,954,160**	**14,630,162**
Մնացորդը դեկ 1 հունվարի 2014թ.	1,863,500	6,812,502	5,954,160	14,630,162
Ընդամենը համապարփակ վնաս				
Վնաս տարվա համար	-	-	(4,390,487)	(4,390,487)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(4,390,487)	(4,390,487)
Մնացորդը դեկ 31 դեկտեմբերի 2014թ.	**1,863,500**	**6,812,502**	**1,563,673**	**10,239,675**

6

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվությունը պետք է ընթերցվի ամփոփ ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող հանձնաբարության հետ միասին:

«Մկրտչի պրոմ-մոլորակների խումբ» ՓԲԸ
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

1. Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «Մկրտչի պրոմ-մոլորակների խումբ» ՓԲԸ-ի («Ընկերություն») Հայաստանի Հանրապետության կողմից ընդունված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա առցիր անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2015թ. հունիսի 9-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփո

Քաջարանի մանկական արվեստի դպրոցը հիմնանորոգման կարիք ունի

Մշակույթ

«Քաջարանի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ն այս տարի կնշի կազմավորման 50-ամյակը: Կեսդարյա պատմություն ունեցող դպրոցը, սակայն, ունի հրատապ լուծում պահանջող խնդիրներ, որոնցից առաջնայինը դպրոցի հիմնանորոգումն է:

Առաջին հայացքից թվում է, թե Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի նման հզոր ձեռնարկություն ունեցող քաղաքում չպիտի լինեն կառույցներ, որոնք վերանորոգման խնդիր ունենան, գտնվեն ոչ բարվոք վիճակում: Շենքը, որ կառուցվել է 1954թ. որպես հանրակրթական դպրոց, 1990-ական թվականներին է տրամադրվել Քաջարանի մանկական արվեստի դպրոցին:

Ներկայումս դպրոցում սովորում է 210 սան, որից այս տարի կավարտի 13-ը: Տնօրեն Արմինե Թումանյանի հավաստմամբ՝ ընդունելությունը, ճիշտ է, դեռեւս լայն թափ չի ստացել, բայց հունիսի կեսի դրությամբ 10-ից ավելի դիմում են ստացել:

Դպրոցում գործում են դաշնամուրի, ջութակի, ազգային եւ փողային նվագարանների, կերպարվեստի եւ պարարվեստի բաժիններ:

> *«13 տարվա ընդմիջումից հետո 2014-15 ուստարում վերաբացվել են ազգային նվագարաններից շվիի եւ դհոլի, փողայինից՝ կլարնետի բաժինները, ինչպես նաեւ արդեն երկու տարի է՝ գործում է պարարվեստի բաժինը: Նախատեսում ենք դպրոցում ունենալ նաեւ թատերարվեստի խումբ, որը դեռեւս շենքային ոչ բավարար պայմանների դեպքում հնարավոր չէ», - նշեց տնօրենը:*

Հունիսի 10-ին դպրոցի հաշվետու համերգ-ցուցահանդես էր, որի ընթացքում հնչեցին ազգային եւ դասական հեղինակների ստեղծագործություններ, հանդիսատեսը հնարավորություն ունեցավ դիտել գեղեցիկ պարային համարներ, կերպարվեստի բաժնի սաների աշխատանքները:

Այս տարի Գյումրիում կայացած 7-րդ միջազգային մրցույթ-փառատոնում դպրոցը գրանցեց հաջողություն. վոկալիստ Սպարտակ Սիմոնյանն արժանացավ 3-րդ կարգի դափնեկրի կոչման, իսկ Հրաչյա Ստեփանյանը՝ դիպլոմի, դասատուն՝ Վարդիթեր Հարությունյանը, կատարած աշխատանքի համար շնորհակալագիր ստացավ:

«Մեր դասատուների 80 տոկոսն այս դպրոցի նախկին սան է: Կադրերի խնդիր չունենք այս պահին, կարելի է ասել, որ երիտասարդ կոլեկտիվ ենք: Կարեւոր է նաեւ այն փաստը, որ այս տարվա նախորդ ամսվանից համայնքային բյուջեի հաշվին ավելացել է դասատուների աշխատավարձը», – տեղեկացրեց Ա.Թումանյանը:

Նշենք, որ դպրոցն ունի 41 աշխատատեղ: Մեկ դրույք ունենալու համար դասատուն նվազագույնը 9 աշակերտ պիտի ունենա, հատկանշական է այն փաստը, որ դպրոցի դասատուների մեծ մասը մեկ դրույքից ավելի ժամեր ունի:

«Նախորդ տարիների համեմատ պակասել է աշակերտների թիվը, որ հավանաբար պայմանավորված է թե՛ դպրոցում երեխաների ծանրաբեռնվածությամբ, թե՛ արվեստի հանդեպ հետաքրքրության պակասով: Մեծ մասամբ աշակերտներին արվեստի դպրոց հաճախելու համար շահագրգռում ենք դասատուներս, լավ կլիներ, որ ծնողները նույնպես երեխաների շրջանում հետաքրքրություն առաջացնեին արվեստի հանդեպ. չէ՞ որ փորձը ցույց է տալիս, որ այդպիսի երեխաներն իրենց շրջապատում առանձնանում են ե՛ւ իրենց գեղագիտական ճաշակով, ե՛ւ իրենց աշխարհընկալմամբ», – նշեց 24 տարվա աշխատանքային փորձ ունեցող վոկալի դասատու Անահիտ Համբարձումյանը:

Վերջինիս կարծիքով՝ երեխաներն ունեն բավարար ունակություններ, որոնք պիտի անհրաժեշտ ուղղությամբ զարգացնել: Այդ հարցում, իհարկե, մեծ է դասատուի դերակատարությունը, բայց ծնողը նույնպես պիտի աջակից լինի: Նոր ուստարվա նախաշեմին Ա.Համբարձումյանը, դիմելով դպրոցի ապագա սաներին, նշեց, որ, ճիշտ է, դպրոցի շենքային պայմանները ոգեւորիչ չեն, բայց ուսումնական աշխատանքները բարձր մակարդակով են ընթանում, որոնց պտուղները ժամանակ առ ժամանակ քաղում են:

Վերջերս դպրոցի սաները մասնակցել են նաեւ Սյունիքի մարզի

արվեստի դպրոցների միջեւ անցկացված մրցույթին, որում քանոնահարուհի Լիլիթ Հովսեփյանն արժանացավ 4-րդ կարգի դիպլոմի, մյուս մասնակիցները՝ շնորհակալագրերի:

Դասատուների համոզմամբ՝ եթե դպրոցը բարեկարգվեր, արվեստի համապատասխան միջավայր ստեղծվեր, երեխաներն ավելի մեծ հետաքրքրություն կցուցաբերեին. չէ՞ որ գեղագիտական ճաշակի զարգացման գործում պակաս կարեւոր չէ արտաքին միջավայրը:

«Շենքը հիմնանորոգման կարիք ունի, բայց պատուհանների եւ ջեռուցման՝ հրատապ լուծում պահանջող հարցերի համար դիմել ենք կոմբինատին, դեռեւս դրական պատասխան չենք ստացել: Եթե գոնե այդ խնդիրները կարողանանք լուծել, գոհ կլինենք», – նշեց տնօրենը:

Արվեստի դպրոցին մշտապես աջակցում է Քաջարանի քաղաքապետարանը՝ հովանավորելով տարբեր մրցույթներին մասնակցությունը, պարբերաբար դպրոցը համալրելով անհրաժեշտ գույքով: **«Անցյալ տարի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի աջակցությամբ ձեռք ենք բերել երեք ջութակ, մեկական շվի եւ դհոլ, քանոն, ինչպես նաեւ պարարվեստի բաժնի սաների համար համապատասխան հագուստ: Նշեմ, որ քաղաքապետարանն իր հնարավորության սահմաններում մշտապես աջակցում է մեզ»,** – տեղեկացրեց Ա.Թումանյանը:

Ցավալիորեն պիտի արձանագրենք, որ արվեստը մեզանում երկրորդական պլան է մղվել, թեպետ, տնօրենի հավաստմամբ, սառույցը կարծես սկսվում է կոտրվել: Մեր այցելության ընթացքում հանդիպած սաներից երկուսը ցանկություն հայտնեց հետագայում շարունակել ուսումն արվեստի բնագավառում:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հարուցվել է քրեական գործ

Լեռնահանքային աշխատանքների կատարման ժամանակ մահացել է «ՋՊՄԿ» ՓԲ ընկերության մեքենավարը

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ լեռնահանքային աշխատանքների կատարման ժամանակ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության մեքենավար Ժորա Ստեփանյանի մահվան դեպքի առթիվ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության պատասխանատու անձի կողմից լեռնահանքային աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնների խախտման հետեւանքով 2015թ հունիսի 6-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, նույն ընկերության լեռնային արտադրամասի բաց հանքի 1950 հորիզոնում տեղի է ունեցել քարաթափում, որի հետեւանքով էքսկավատորի մեքենավար Ժորա Հրանտիկի Ստեփանյանը մահացել է:

Հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով (լեռնահանքային աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ):

Կատարվում է նախաքննություն՝ դեպքի բոլոր հանգամանքների բազմակողմանի եւ օբյեկտիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե
11.06.2015

Մենք քո ապագա զինվորն ենք, Հայաստան

Նախակրթություն

Հայոց բանակի զինվորներն ու Գորիսի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության զինվորիկները Գորիսի պետական դրամատիկական թատրոնի դահլիճի բեմում տոնում էին մայիսյան հաղթանակները:

«Մենք քո ապագա զինվորն ենք, Հայաստան» խորագիրը կրող տարեվերջյան հաշվետու հանդեսի հիմքում դրված էր բանակ-հասարակություն կապի ամրապնդման կարեւորությունը, որը ներկայացվեց փոքրիկ հրաշքների մատուցմամբ:

Հայրենիքի այսօրվա պաշտպաններից թույլտվություն ստանալուց հետո մանուկներն անցան տոնական միջոցառման ներկայացմանը: Բեմը լեցուն էր հաղթական երգերով, խրոխտ պարերով, ասմունքով, բեմականացմամբ, ուր ասելիք կար, խորհուրդ կար ու մեծ իմաստ՝ պարուրված հավատով…

Միջոցառմանը ներկա էին 1-ին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, ՀՀ ՊՆ ներկայացուցիչներ, մանկավարժներ, ծնողներ, հյուրեր, ովքեր շնորհավորեցին հաղթանակների առթիվ: Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը նույնպես շնորհավորեց, իր ելույթում կարեւորեց բանակ-հասարակություն կապի ամրապնդումը եւ շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին եւ ՆՈՒՀ ղեկավարներին այս դժվարին գործը ստանձնելու եւ պատվով կատարելու համար: *«Ինձ համար շատ հաճելի է երկու ժամ գտնվել*

երեխաների մոլորակում, ուր միշտ բարին է հաղթում: Ամեն անգամ, երբ նայում եմ փոքրիկների աչքերի մեջ, ավելի մեծ պատասխանատվություն եմ զգում: Նրանց վաղվա բարեկեցիկ կյանքի համար այսօր մենք ենք պատասխանատու եւ ամեն ինչ փորձում ենք այնպես անել, որ վաղվա օրը նրանց համար ավելի պայծառ լինի: Մենք երկու բանակ ունենք: Առաջինը մեր հայոց բանակն է, ում վստահված է մեր այսօրվա պաշտպանությունը: Երկրորդը՝ կրթական բանակն է, ինչը հույս է ներշնչում, որ մեր ապագան կլինի հուսալի ձեռքերում»:

Թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական կոլեկտիվը, հաստատության տնօրեն Ժասմենա Խաչատրյանի գլխավորությամբ, ամեն ինչ արել էր միջոցառումն ըստ պատշաճի եւ գաղափարական ու գեղարվեստական բարձր մակարդակով կազմակերպելու համար: Եվ դա նրան հաջողվեց:

ԱՐԵՎԻԿ ԱԲԵԼՅԱՆ

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍՍՀՄԱՆՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 19.06.2015թ.: